

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2002թ. հունվար-հուլիսին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 152.5 մլրդ. դրամ, որը 2001թ. մակարդակը գիջել է 0.8%-ով:

2002թ. հուլիսի համախառն արտադրանքը կազմել է հունիսի 127.5%-ը (համադրելի գներով):

Հանրապետությունում շարունակվում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի աշխատանքները: Օպերատիվ տվյալներով, 2002թ. օգոստոսի 1-ի դրությամբ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը (բացառությամբ կարտոֆիլի) գիճել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի մակարդակը: Այսպես՝ հացահատիկային և հատիկա-ընդեղենային մշակաբույսերի համախառն բերքը պակասել է 23.2 հազ. տոննայով կամ 14.5%-ով, բանջարեղենինը՝ համապատասխանաբար 5.9 և 6.4%, բոստանինը՝ 0.8 և 17.0% ու պտղինը՝ 18.0 հազ. տոննայով կամ 64.5%-ով: Հարկ է նշել, որ չնայած հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի կրճատմանը, ավելացել է դրանց միջին բերքատվությունը 3.6 ցենտներով կամ 14.6%-ով՝ և կազմել 28.2 ցենտներ:

2002թ. գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն բերքի պակասը 2001թ. նկատմամբ բացատրվում է գարնանային տևական տեղումներով (հորդառատ անձրևներ, կարկուտ, իսկ առանձին վայրերում՝ ձյուն), ինչը խոչընդոտեց գարնանացանի բնականոն ընթացքը, ցանքի ժամկետները հետաձգվեցին շուրջ 20-25 օր և դրան համապատասխան ուշացումով են ընթանում բերքահավաքի աշխատանքները:

Պտղի համախառն բերքի զգալի կրճատումը պայմանավորված է ընթացիկ տարում մասնակի ցրտահարություններով, ինչպես նաև ծաղկման շրջանում տեղած անձրևներից փոշոտումը լավ չընթանալու հետևանքով:

Անասնապահական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2002թ. օգոստոսի 1-ի դրությամբ (հաշվարկային տվյալներով)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ	2002թ.	2002թ. % 2001թ. նկատմամբ
Արագածոտն	4.0	97.6	37.6	101.9	13.6	103.8
Արարատ	3.3	106.5	25.9	115.1	18.9	102.2
Արմավիր	3.3	103.1	21.2	91.8	18.8	86.6
Գեղարքունիք	6.4	103.2	61.0	110.5	18.3	92.4
Լոռի	3.8	97.4	37.2	98.2	10.2	99.0
Կոտայք	5.0	116.3	33.2	97.6	121.6	111.5
Շիրակ	5.3	103.9	49.4	108.3	19.3	104.9
Սյունիք	3.0	96.8	28.4	102.9	8.1	92.0
Վայոց ձոր	1.4	87.5	12.9	100.8	6.0	113.2
Տավուշ	2.9	96.7	23.8	101.7	13.9	102.2
ք.երևան	1.7	425.0	2.2	115.8	26.3	122.3
ԸՆԴԱՄԵՆՆ ԴԴ	40.1	105.8	332.8	103.6	275.0	105.8

Բերված տվյալները վկայում են, որ գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7000 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի հաշվարկային տվյալներով, 2002թ. հունվար-հուլիսին իրացվել է 40.1 հազ. տոննա (կենդանի քաշով) անասուն և թռչուն, ինչը գերազանցել է 2001թ. ցուցանիշը 2.2 հազ. տոննայով կամ 5.8%-ով, կաթի արտադրությունը համապատասխանաբար՝ 11.7 հազ. տոննայով կամ 3.6%-ով, ձվինը՝ 15.0 մլն. հատով կամ 5.8%-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը:
16 «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2002թ. հունվար-հուլիսին»